ԲԱՆԱՎԵՃԻ՝ ՈՐՊԵՍ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

Նունե Ջոմարդյան.
ԵՄՀ իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ,
միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի պատասխանատու

Հոդվածում ներկայացված են բանավեճի՝ որպես դասավանդման մեթոդի առավելությունները, որոնք հնարավորություն են տալիս ուսումնառողին ոչ միայն ձեռք բերել քննարկվող թեմայի վերաբերյալ խոր և բազմակողմանի գիտելիքներ, այլև անմիջականորեն («այստեղ և հիմա») կիրառել այդ գիտելիքը: Ըստ հեղինակի, բանավեճն օգնում է ձևավորել ակտիվ քաղաքացիական դիրքորոշում, լինել ազնիվ, դրսևորել հարգանք և հանդուրժողականություն: Մեթոդը դասավանդման գործընթացը դիտարկում է որպես գիտելիքի, կարողությունների, հմտությունների և ուսումնառուի անձնական հատկանիշների զարգացման գործընթաց, որտեղ դասավանդողը հադես է գալիս այդ գործընթացի ղեկավարի դերում:

Հիմնաբառեր. բանավեճ, դասավանդման մեթոդ, գիտելիք, քննադատական մտածելակերպ, փաստարկ, թիմային աշխատանք, գնահատում:

Արագ զարգացող տեխնոլոգիաների դարաշրջանում կերպարանափոխվում է ինչպես հասարակությունը, այնպես էլ նրա հիմնական բջիջը՝ մարդը: Փոփոխվում են նաև վերջինիս ներկայացվող պահաջները: Ժամանակին համահունչ քայլելու հիմնական գրավականն այդ պահանջներին համապատասխանելն է: Այսօրվա գիտելիքահեն հասարակությանն անհրաժեշտ են ոչ միայն խելացի, այլև ճկուն, ազատ հաղորդակցվող, արագ կողմնորոշվող, փոփոխվող իրավիճակներին հարմարվող, գաղափարներ առաջադրող, ինքնուրույն որոշումներ կայացնող անհատներ: Հանգամանքներ, որը նոր

1 Ներկայացվում է 2016թ. հունիսի 16-ին Եվրասիա միջազգային համալսարանում տեղի ունեցած «Ուսուցման մեթոդներ և կրթական վերջնարդյունքներ» թեմայով գիտաժողովի ընթացքում քննարկված նյութերի հիման վրա:

մարտահրավեր է նետում նաև գիտելիք փոխանցողին՝ փոփոխելով կրթական հաստատության դերակատարությունը:

Ուսումնառության ընթացքում գիտելիքի ուղղակի փոխանցման վրա հիմնված կրթական գործընթացից անցում կատարելով դեպի վերջնարդյունքների գործնական կողմնորոշիչի վրա հիմնված մոտեցմանը՝ առաջանում է կրթական նոր տեխնոլոգիաների և մեթոդների կիրառման անհրաժեշտություն, ինչն իր հերթին անխուսափելիորեն նոր որակ է պահանջում նաև դասավանդողից: Վերջինս պետք է կարողանա ուսումնառուներին զինել ոչ միայն գիտելիքով, այլ նաև անհրաժեշտ ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաներով, որոնց պետք է տիրապետի ժամանակակից աշխատաշուկա մուտք գործող յուրաքանչյուր մասնագետ: Նպատակին հասնելու լավագույն միջոցներից է դասավանդման բազմաֆունկցիոնալ մեթոդների կիրառումը՝ միաժամանակ ապահովելով և՛ գիտելիքի ձեռքբերում, և՛ կարողությունների ձևավորում, և՛ հմտությունների զարգացում: Նման բազմագործառույթ մեթոդների շարքին է դասվում վերջին շրջանում մեծ տարածում ստացած ուսումնական բանավեճը: Այն հնարավորություն է տալիս ուսումնառողին ոչ միայն ձեռք բերել քննարկվող թեմայի վերաբերյալ խոր և բազմակողմանի գիտելիքներ, այլև անմիջականորեն («այստեղ և հիմա») կիրառել այդ գիտելիքը: Բանավեճն օգնում է ձևավորել ակտիվ քաղաքացիական դիրքորոշում, լինել ազնիվ, դրսևորել հարգանք և հանդուրժողականություն: Մեթոդը դասավանդման գործընթացը դիտարկում է որպես գիտելիքի, կարողությունների, հմտությունների և ուսումնառողի անձնական հատկանիշների զարգացման գործընթաց, որտեղ դասավանդողը հադես է գալիս այդ գործընթացի ղեկավարի դերում:

Բանավեճ կարելի է կիրառել ցանկացած գիտության բնագավառում, ցանկացած մասնագիտության համար, ներգրավել 4–ից մինչև 20 ուսումնառուներ՝ կախված ընտրված ձևաչափից[2]: Մեթոդը բավականին ճկուն է և հնարավորություն է տալիս բազմաթիվ ձևաչափերի օգնությամբ ոչ միայն ձևավորել խորը գիտելիք, այլև զարգացնել տարբեր հմտություններ և կարողություններ՝ ելնելով վերջինիս նպատակից ու խնդիրներից, բարձրացնել ուսումնառուների հետաքրքրությունը հետազոտության հանդեպ: Այսպես՝ Կարլ Պոպերի ձևավաչափը լավագույն տարբերակ է սկսնակ բանավիճողների համար, հնարավորություն է տալիս ընկալել բանավեճի բուն իմաստը և կառուցվածքը, աշխատել թիմում և գնահատել թիմային աշխատանքի կարևորությունը: Բրիտանական ձևաչափը, պահանջելով ուսումնառուներից բանավեճի որոշակի փորձ, նպաստում է արագ կողմնորոշվելու, ստեղծագործական մտածելակերպ դրսևորելու, գաղափարները տեղում վերաձևակերպելու կարողությունների խորացմանը: Հայեցակարգերի, արժեքների շուրջ բանավիճելու լավագույն տարբերակ է Լինկոլն–Դուգլաս ձևաչափը, իսկ ազատական (լիբերալ) ակումբի պարագայում բանավիճողները կարող

2 Բանավեճի տարբեր ձևաչափերի նկարագրություններին ծանոթանալու համար տես Ձեռնարկ բանավիճողների համար: Կազմողներ՝ Ն.Ս. Ջոմարդյան, Մ.Մ. Շահբազյան: «Եվրասիա» բանավեճի ակումբ – Երևան, 2013: http://www.eiu.am/files/2014/2265_EURASIA-DEBATE-CLUB.pdf (մուտք՝ 05.06.2016):

են հանդես գալ տարբեր դերակատարումներով (մոդերատոր, փորձագետ, քաղաքական գործիչ, լրագրող և այլն)։ Բանավիճելու կարողությունների զարգացման մեկ այլ տարբերակ է Համաշխարհային դպրոցական ձևաչափը։ Ըստ էության ձևաչափերը բավականին բազմազան են և հնարավորություն են տալիս կիրառել դրանք ինչպես իրենց դասական ձևով, այնպես էլ որոշակի փոփոխություններով, բացի այդ դասավանդողը կարող է մշակել ձևաչափի սեփական տարբերակը[3]։ Ուսումնառության ընթացքում հնարավոր է նաև կիրառել մեթոդը ամբողջությամբ կամ գործադրել նրա առանձին տարրերը։ Որպես դասընթացի առանձին տարր՝ կարելի է իրականացնել աշխատանքներ առանձին հասկացությունների սահմանումների հետ, կառուցել փաստարկներ և հակափաստարկներ, համեմատել փաստարկները, կազմել ժամանակային առումով սահմանափակված ելույթներ և այլն։

Այսպիսով՝ ներկայացվող մեթոդն ունի լայն հնարավորություններ և կիրառման մի շարք առավելություններ։

Այն նախևառաջ նպաստում է գիտելիքի հարստացմանը և պահանջում է, որի բանավիճողը խորությամբ տիրապետի քննարկվող թեմային։ Ուսումնառուն չի կարող սահմանափակվել դասագրքում ներկայացված նյութով, քանզի այն բավարար չէ բանավեճին մասնակցելու, առավել ևս հաջողության հասնելու համար։ Բանավիճողին անհրաժեշտ են լինելու տեսական և գործնական գիտելիքներ, այդ թվում՝ եզրույթների, գործածվող հասկացությունների սահմանումների, մեկնաբանությունների, առկա կողմ և դեմ տեսությունների, կիրառման առանձնահատկությունների, գործնական նշանակության, պրակտիկայում գործածվող դրական և բացասական օրինակների և այլ մոտեցումների վերաբերյալ։ Իր հետազոտությունների ընթացքում ուսումնառուն պետք է ուսումնասիրի թեմային առընչվող գիտական գրականությունը, վիճակագրական տվյալները, պրակտիկան, օգտվի համացանցից և տարբեր որոնողական համակարգերից, որոշ դեպքերում կատարի սոցիոլոգիական հարցումներ։ Նմանատիպ աշխատանքը զուգահեռաբար ձևավորում է նաև հետազոտական հմտություններ։

Բնավեճը զարգացնում է նաև քննադատական մտածողությունը տրամաբանորեն ճիշտ կառուցված և հիմնավորված փաստարկների ձևակերպման միջոցով։ Փաստարկումների միջոցով բանավիճողը սովորում է բացահայտել հիմնախնդիրներ, կենտրոնանալ հիմնական, առավել կարևոր խնդիրների վրա, զանազանել գլխավորը երկրորդականից։ Քննադատական մտածողությունը հնարավորություն է տալիս օգտագործել բոլոր թույլատրելի միջոցները հիմնախնդիրը բացահայտելու, դրա օգնությամբ լավագույն լուծումներ գտնելու, համատեղելի փաստերը անհամատեղելիներից տարբերակելու, հակասությունները բացահայտելու, գործողությունների, գաղափարների և համոզմունքների հետևանքները գնահատելու համար։ Միևնույն խնդիրը կողմ և դեմ տեսանկյունից վերլուծելու արդյունքում

3 Վերջինս խորհուրդ է տրվում անել բանավեճի որոշակի փորձ ձեռք բերելուց հետո։

ուսումնառուն բացահայտում է քննարկվող թեմայի ուժեղ և թույլ կողմերը, ընկալում հայեցակարգերն ու սովորում ապացուցել:

Շատ կարևոր է, որ բանավիճողն իր փաստարկների հետ մեկտեղ ներկայացնի նաև այն աղբյուրները, որոնցից օգտվել է, ինչը հնարավորություն կտա դասավանդողին գնահատել տարբեր աղբյուրներից օգտվելու և հետազոտություն իրականացնելու ուսումնառողի կարողությունները, ինչպես նաև կբարձրացնի վերջիններիս պատասխանատվությունը:

Բանավեճը նպաստում է նաև լսելու կարողության զարգացմանը: Սովորաբար սկսնակ բանավիճողները անտեսում են ընդդիմախոսի ելույթը՝ կենտրոնանալով հիմնականում սեփական ճառի վրա: Սակայն ընթացքում հասկանում են, որ բանավեճում հաջողության հասնելու համար կարևոր է ուշադրությամբ լսել և վերլուծել ընդդիմախոսի ելույթը, բացահատել դրա ուժեղ և թույլ կողմերը, ներկայացված դատողություններում առկա հակասությունները: Եթե կողմերը միմյանց չլսեն, ապա բանավեճ տեղի չի ունենա, քանզի յուրաքանչյուր բանախոս ուղղակիորեն կներկայացնի իր կողմից պատրաստած տնային նյութն առանց առարկությունների, հակափաստարկների և հերքումների: Լսելու ունակությունն օգնում է նաև հարցեր տալու փուլում, առանց ելույթն ընկալելու հակառակորդ թիմը չի կարող հարցեր ուղղել բանախոսին և կկորցնի առավելություններ ձեռք բերելու հնարավորությունը: Լսելու կարողությունը կարևոր է նաև հարցին ճիշտ պատասխանելու համար: Դա բացատրվում է նրանով, որ հաճախ բանախոսն առանց հարցը մինչև վերջ լսելու սկսում է խոսել և արդյունքում պատասխանը մնում է թերի:

Այստեղից կարող ենք եզրակացնել, որ հարցեր ձևակերպելու և դրանց հմտորեն պատասխանելու կարողությունը կարևոր նշանակություն ունի բանավեճի արդյունավետության համար: Հարցը տրամաբանական ձևերից մեկն է և հիմնվում է գիտելիքի որոշակի համակարգի վրա: Յուրաքանչյուր հարց ներառում է իր մեջ ելակետային տեղեկատվություն, որը համարվում է հարցի հիմքը կամ նախապայմանը, ինչպես նաև մատնացույց է անում տեղեկատվության պակասի և այն հետագայում լրացնելու ու ընդլայնելու անհրաժեշտության վրա:

Յուրաքանչյուր հարց նպատակ է հետապնդում ստանալ նոր տեղեկատվություն պատասխանի տեսքով: Հարց տալու համար բանավիճողին անհրաժեշտ է որոշակի պատկերացում ունենալ դատողության առարկայի վերաբերյալ, իսկ հարցին պատասխանելու համար՝ գիտելիք, ինչպես նաև հարցի բովանդակությունն ու բնույթը ստույգ հասկանալու կարողություն[4]:

Դիպուկ, գործուն և օգտակար հարցեր ձևակերպելու կարողությունը բանավիճողի կարևորագույն հմտություններից մեկն է:

Ճիշտ հարցադրումը հնարավորություն է տալիս հստակեցնել ընդդիմախոսի դիրքորոշումը, ստանալ լրացուցիչ տեղեկություն, ավելի լավ հաս-

4 Տե՛ս Светенко Т.В. Путеводитель по дебатам. Учебное пособие для педагогов и учащихся. http://ru.idebate.org/sites/live/files/Svetenko_book.pdf (մուտք՝ 05.06.2016)

կանալ վերջինիս դիրքորոշումը քննարկվող հարցի վերաբերյալ, նվազեցնել դիմացինի փաստարկի նշանակությունը, գտնել հակասություններ ընդդիմախոսի դատողությունների տրամաբանական շղթայում, ուրվագծել հերքման ռազմավարական գիծը: Միևնույն ժամանակ հիմնավորված և հստակ պատասխանն օգնում է ամրապնդել սեփական դիրքորոշումը, ուժեղացնել ներկայացված թեզի հիմնավորումը:

Թիմային աշխատանքի կատարումը բանավեճի հաջորդ կարևոր առանձնահատկությունն է: Բանավիճողները սովորում են համատեղ աշխատել, միմյանց հետ քննարկել, մեկը մյուսին լսել և մշակել փոխհամաձայնեցված դիրքորոշումներ:

Թիմային աշխատանքը կարևոր դեր է խաղում նաև բուն բանավեճի ընթացքում: Ունենալով շփման սահմանափակ հնարավորություն, նրանք պետք է կարողանան ներդաշնակ փոխազդել և համագործակցել, հասկանալ միմյանց և հայտնել միասնական կարծիք: Թիմի ներսում առկա հակասություններն ու անհամաձայնությունները բացասաբար են անդրադառնում ընդհանուր դիրքորոշում մշակելու և հաղթանակի հասնելու համար: Դասավանդողի համար հույժ կարևոր է կատարել դերերի ճիշտ բաշխում և ապահովել թիմի անդամների միջև առողջ աշխատանքային մթնոլորտ: Կարևոր է նաև իմանալ, որ յուրաքանչյուր հաջորդող ելույթ շաղկապում, լրացնում և խորացնում է նախորդ բանախոսի ելույթը: Այս տեսանկյունից թիմը, նրա ընդհանուր դիրքորոշումը ընկալվում են որպես մեկ միասնական ամբողջություն:

Բանավեճն օգնում է զարգացնել նաև ուսումնառուի կողմից ժամանակի կառավարման, նոր իրավիճակում արագ կողմնորոշվելու և միտքը հակիրճ և հստակ ձևակերպելու կարողությունները: Բանավեճի առանձնահատկություններից մեկը այն է, որ այն իրականացվում է ժամային որոշակի սահմաններում: Չնայած նրան, որ յուրաքանչյուր ձևաչափ ունի իր առանձնահատկությունները, ժամային առումով կարող ենք ներկայացնել հետևյալ ընդհանրացումները՝ կողմերի առաջին խոսնակների ելույթները՝ առավելագույնը 8 րոպե, հաջորդ խոսնակների ելույթները՝ 7–8 րոպե, յուրքանչյուր ելույթից հետո հարց ու պատասխանի փուլը՝ 3 րոպե: Բանավիճողը պետք է այնպես հաշվարկի իր ժամանակը, որ կարողանա նախ հերքել ընդդիմախոսի դիրքորոշումը, այնուհետև ներկայացնել իր հակափաստարկները[5]: Ուսումնառուն պետք է հասկանա, որ ինքն ունի ելույթի ընդամենը մեկ հնարավորություն և իր խոսքը պետք է կառուցված լինի այնպես, որ ներկայացված և հիմնավորված լինեն վերջինիս փաստարկներն ու գաղափարները:

Հաճախ ելույթի ընթացքում, ելնելով ընդդիմախոս թիմի դիրքորոշումից, բերված փաստարկներից, հիմնավորումներից, հնչեցված հարցերից, առաջանում է անհրաժեշտություն վերաձևակերպելու միտքը, օգտագործելու

5 Բրիտանական ձևաչափում այդ նույն ժամանակահատվածում անհրաժեշտ է նաև պատասխանել հարցերին:

նոր տվյալներ, առաջ քաշելու նոր գաղափարներ: Այստեղ նրան օգնության են գալիս արագ կողմնորոշվելու կարողությունը, մտքի ճկունությունը և փաստարկելու հմտությունները:

Բանավիճողի համար ոչ պակաս կարևորություն ունի նաև հրապարակային ելույթ ունենալու և մարդկանց իր կողմը գրավելու կարողությունը: Դեյլ Քարնեգին իր «Ինչպես ազդել մարդկանց վրա խոսքի միջոցով» գրքում նշում է. «Մեր մասին դատում են այն բանի հիման վրա, թե մենք ինչ ենք անում, ինչ տեսք ունենք, ինչ ենք ասում և ինչպես ենք ասում»[6]: Բանավեճը լավագույն միջոցներից է զարգացնելու հռետորական կարողությունները: Սակայն չպետք է մոռանալ, որ բանավեճի գլխավոր նպատակներն են գիտելիքի խորացումը, տրամաբանված և հիմնավորված փաստարկումներ, դատողություններ ու եզրահանգումներ անելու կարողությունների (քննադատական և ստեղծագործական մտածելակերպի) զարգացումը: Դասավանդողը պետք է խուսափի միայն արտաքին տեսքն ու ներկայացման ոճը գնահատելուց: Սա գնահատման ժամանակ ամենահաճախ հանդիպող սխալներից մեկն է:

Բանավեճի գնահատման համար մշակվում է հատուկ ձևաչափ, որտեղ գնահատողը նշումներ է անում յուրաքանչյուր բանախոսի ելույթի, այն է՝ ներկայացված փաստարկների, դրանց հիմնավորումների, հնչեցրած հարցերի և պատասխանների վերաբերյալ: Բանավեճի ավարտին «դատավորները» (գնահատողները), առանց որևէ քննադատության, տալիս են իրենց մեկնաբանությունները ելույթների վերաբերյալ:

Ըստ էության բանավեճի մեթոդի կիրառման ընթացքում գնահատումը կատարում է երեք կարևոր գործառույթ: Ամենից առաջ գնահատումն անհրաժեշտ է, որպեսզի ուսումնառողները ձգտեն սովորելու (գնահատում ուսումնառելու համար): Այնուհետև դասավանդողը գնահատում է այն ամենը, ինչ սովորել և կատարել է ուսումնառուն (ուսումնառության գնահատում): Վերջապես, գնահատումը օգնում է սովորել (գնահատումը որպես ուսումնառության միջոց):

Այս ուսումնասիրությունում ցանկանում ենք հատուկ ուշադրություն դարձնել գնահատման վերջին գործառույթի վրա: Գնահատումը կարող է ուսուցանող մեծ ուժ դառնալ ճիշտ կիրառման դեպքում: Փորձը ցույց է տալիս, որ այն դեպքերում, երբ գնահատողների դերում հանդես են գալիս ուսումնառուները, և իրենք էլ գնահատում ու մեկնաբանում են բանավեճի արդյունքները, վերջիններս էլ ավելի լավ են պատկերացնում բանավեճի բուն իմաստը, փաստարկների կարևորությունը և նրանց կառուցվածը: Սովորաբար, դատավորների դերում հանդես եկած ուսումնառուները դառնում են հմուտ բանավիճողներ:

Մեթոդը ճիշտ կիրառելու համար շատ կարևոր է, որ դատավորներն ու բանավիճողները հասկանան, թե ում են հասցեագրած բանախոսների

6 Տես Дейл Карнеги Как вырабатывать уверенность в себе и влиять на людей, выступая публично. СЛК; 1997, էջ 107:

ելույթները, այսինքն՝ փաստարկներն ու հակափաստարկները: Բոլոր կողմերին անհրաժեշտ է բացատրել, որ բանավեճը կողմ և դեմ թիմերի միջև ընթացող վեճը կամ երկխոսությունը չէ: Բանավեճի բուն իմաստն է երրորդ կողմին (դատավորներին) համոզել ընդունելու տվյալ, այլ ոչ թե ընդդիմախոս թիմի դիքորոշումը: Այդ իսկ պատճառով, ելույթները պետք է հասցեագրվեն դատավորներին, այլ ոչ թե հակառակորդ թիմի անդամներին: Դատավորներն էլ իրենց հերթին պետք է մի կողմ դնեն իրենց անձնական համոզմունքներն ու տեսակետերը և չեզոք դիրքերից գնահատեն ներկայացված փաստարկները՝ առանձնացնելով հիմնավորված և համոզիչ ձևով փաստարկված ելույթները:

Բանավեճի իմաստն ու կարևորությունը ուսումնառողների մոտ միանգամից չի ձևավորվում, դրա ընկալումն առաջ է գալիս բանավիճելու որոշակի փորձ ձեռք բերելուց հետո: Այդ իսկ պատճառով մեթոդի մեկանգամյա կիրառումը չի կարող հանգեցնել հաջողության, անհրաժեշտ է այն դարձնել դասավանդման մշակույթի անբաժանելի մաս:

ОСНОВНЫЕ ХАРАКТЕРИСТИКИ ДЕБАТА КАК МЕТОДА ОБУЧЕНИЯ

Нуне Джомардян
Руководитель Центра международных связей и исследований Международного университета Евразия, заместитель заведующего юридической кафедры

В статье представлены преимущества дебатов как метода обучения, который позволяет учащимся приобрести не только глубокие и всесторонние знания о предмете, но и непосредственно («здесь и сейчас») применить эти знания. По мнению автора, дебаты помогают формировать активную гражданскую позицию, быть честным, проявлять уважение и терпимость. Метод рассматривает обучение как процесс развития знаний, умений, навыков и личностных качеств учащегося, где преподаватель выступает в качестве руководителя этого процесса.

Ключевые слова: дебаты, метод обучения, знание, критическое мышление, аргумент, работа в группе, оценка (судейство).

MAIN FEATURES OF DEBATE AS A TEACHING METHOD

Nune Jomardyan
Head of International Relations and Research Center, Deputy Head of Law Department at Eurasia International University

The article presents the advantages of debate as a teaching method that allows the learner to acquire not only deep and comprehensive knowledge about the subject, but also to apply this knowledge directly (“here and now”). According to the author, the debate helps to create active civil position, to be honest, show respect and tolerance. The method considers teaching as a process of knowledge, abilities, skills and personal attributes of the learner’s development process where the teacher is speaking as the head of this process.

Key words: debate, teaching method, knowledge, critical thinking, argument, teamwork, evaluation.